ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 49/09

Քաղ. Երևան 23 հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. հունվարի 23-ի նիստում (արձանագրություն № 67/6) քննարկեց «Նահապետ և Կ» ընկերության ներկայացուցիչ ՀՀ հավատարմատար Է.Նահապետյանի 2008թ. դեկտեմբերի 18-ի բողոքը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն) ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժնի՝ Ռեմտսմա Սիգարետենֆաբրիկեն ԳմբՀ (DE) ընկերության STYLE SLIMS SELECTION VERTE (h.20061035) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 22.07.2008թ. կրկնական փորձաքննության որոշման դեմ:

2008թ. հուլիսի 22-ի իր որոշմամբ կրկնական փորձաքննությունը՝ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ կարգ) 15.2-րդ և 93.2-րդ կետերի համաձայն, մերժել է հայտարկված STYLE SLIMS SELECTION VERTE (h.20061035) համակցված ապրանքային նշանի գրանցումը Հայաստանում, հիմք ընդունելով նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ Eastern Company S.A.E. ընկերության IR 692750 միջազգային գրանցում ունեցող STYLE , ինչպես նաև Sony Overseas SA (CH) ընկերության IR 734636 միջազգային գրանցում ունեցող SONY STYLE շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայությունը:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը համաձայն չէ կրկնական փորձաքննության որոշման հետ, քանի որ չի համարում մերժված և հակադրված նշանները շփոթելու աստիճան նման: Մերժված նշանը դա համակցված ապրանքային նշան է, որն իրենից ներկայացնում է ուղղանկյուն, որի աջ կողմը երանգավորված է բաց կանաչով, իսկ ձախ կողմը՝ բաց երկնագույնի բարակ զոլով: Ուղղանկյան վերևում լատիներեն այբուբենի տառերով գրված է «selection verte» արտահայտությունը , իսկ մեջտեղում՝ «style» և

«slims» բառերը: Նշանի վերևում կա սպիտակ և մուգ ու բաց կանաչով պատկերված թիթեռի ոճավորված պատկեր, որը, կարծես թե, նստած է կոր ցողունի վրա: Բողոքարկողը համարում է, որ նշանի յուրահատուկ գունային լուծումը, արտասովոր պատկերն ու տարբեր լեզուներով կատարված ոճավորված գրառումների համադրությունը տալիս են STYLE SLIMS SELECTION VERTE նշանին տարբերակիչ հատկություն:

Հակադրված IR 692750 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանը բաղկացած է երկու մասից (գրառումներից)՝ արաբերեն և անգլերեն: Չնայած անգլերեն մասը կազմում է հայ սպառողին հայտնի STYLE բառը, սակայն արաբերեն գրառումը վկայում է նշանի արաբական ակունքների մասին: Բողոքարկողը հարկ է համարում նշել, որ ոչ մի օտարերկրյա ընկերություն չի օգտագործի արաբական կամ այլ համանման տառերով գրված գրառումներ զուտ տարբերվելու համար: Այդ գրառումները ընկալվում են միմիայն այդ երկրներից գործընկերների առկայության կամ այդ երկրներրին պատկանելիության դեպքում: Ինչ վերաբերում է հայ սպառողներին, ապա նրանք, ի տարբերություն այլ երկրի սպառողների, երբեկ չեն շփոթի նման գրառումներով նշանները և չեն մտածի անգամ այլ նշանների հետ զուգահեռներ անցկացնելու մասին:

Ինչ վերաբերում է SONY STYLE հակադրված ապրանքային նշանին, ապա այդ նշանում տրամաբանական շեշտը ընկնում է SONY բառի վրա, որը վերցված է սեփականատիրոջ՝ Sony Overseas SA (CH) ընկերության անվանումից և հանդիսանում է դրա խորհրդանիշը: Նշանի անվանումը թարգմանաբար նշանակում է՝ SONY ընկերության ոճը: Բողոքառկողի կարծիքով, ամբողջ աշխարհում, և Հայաստանում նույնպես, սպառողը չի շփոթի հանրահայտ Sony Overseas SA ընկերության SONY STYLE բառային նշանը մեկ այլ STYLE-ի հետ, քանի որ այդ ընկերության արտադրանքը մեզանում լայն տարածում և օգտագործում է ստացել:

Միաժամանակ բողոքարկողը նշում է, որ «Նահապետ և Կ» ընկերության կողմից կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ինչպես EASTERN COMPANY S.A.E. (EG) ընկերության անունով գրանցված STYLE (IR 692750) այդպես էլ Sony Overseas SA (CH) ընկերության անունով գրանցված SONY STYLE (IR 734636) ապրանքային նշանները չեն օգտագործվել Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 34-րդ դասի ապրանքների համար:

Ուստի և «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, բողոքարկողի կողմից 16.08.2008թ. բողոքարկման խորհուրդ դիմումներ էին ներկայացվել, հակադրված ապրանքային նշանների գրանցման գործողությունը դրանց չօգտագործման պատճառով վաղաժամկետ դադարեցնելու պահանջով՝ IR692750 միջազգային գրանցման գործողությունը ամբողջությամբ և IR734636 միջազգային գրանցումը միայն դաս 34-ի ապրանքների նկատմամբ, որը բողոքարկման Խորհրդի 2008թ. դեկտեմբերի 8-ի համապատասխան որոշումներով բավարարվեց:

Այսպիսով, բողոքարկողը համարում է, որ վերացել են STYLE SLIMS SELECTION VERTE (հ.20061035) ապրանքային նշանի գրանցումն մերժելու հիմքերը և, ելնելով դրանից, խնդրում է

վերանայել կրկնական փորձաքննության որոշումը և նշված ապրանքային նշանը գրանցել Հայաստանում:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համարում է, որ STYLE SLIMS SELECTION VERTE (հ.20061035) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության 2008թ. հուլիսի 22-ի որոշումը օրինաչափ էր, սակայն հաշվի առնելով նոր ի հայտ եկած հանգամանքները, այն է՝ 2008թ. դեկտեմբերի 8-ի բողոքարկման խորհրդի դ 37/08 և դ 38/08 որոշումների համաձայն հակադրված STYLE (IR 692750) և SONY STYLE (IR 734636) ապրանքային նշանների գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու փաստը, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ վերացել են STYLE SLIMS SELECTION VERTE (հ.20061035) ապրանքային նշանի գրանցումն մերժելու հիմքերը:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Նահապետ և Կ» ընկերության բողոքը ամբողջովին, չեղյալ ճանաչել STYLE SLIMS SELECTION VERTE (հ.20061035) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին 2008թ. հուլիսի 22-ի կրկնական փորձաքննության որոշումը և STYLE SLIMS SELECTION VERTE ապրանքային նշանը գրանցել Հայաստանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան